ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ներկա տեղեկատվության – գիտելիքի վրա հիմնված հասարակարգում դպրոցական գրադարանն ապահովում է հիմնարար տեղեկատվություն – գաղափարներ հաջող գործունեություն ծավալելու համար: Դպրոցական գրադարանը ուսանողներին տալիս է կյանքի ընթացքում շարունակական ուսման ձիրք – զարգացնում է եր–ակայությունը, հնարավորություն տալով դրս–որվելու որպես պատասխանատու քաղաքացիներ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցական գրադարանն առաջարկում է ուսումնական ծառայություններ, գրքեր – պաշարներ, որոնք դպրոցական համայնքի բոլոր անդամներին ընձեռնում են քննադատական մտածողություն – տեղեկատվության տարբեր միջոցները արդյունավետ օգտագործելու հնարավորություն: Դպրոցական գրադարանները հանդիսանում են ավելի ընդարձակ տեղեկատվական – գրադարանային ցանցի մի օղակը՝ համաձայն Միացյալ Ազգերի կրթության, գիտության – մշակույթի կազմակերպության Հանրային գրադարանի հռչակագրում ընդունված սկզբունքների:

Գրադարանի աշխատակազմը օգնում է օգտագործել գրքերը – այլ տեղեկատվական աղբյուրները՝ դասակարգելով դրանք գեղարվեստականից մինչ– փաստագրական, տպագրականից մինչ– էլեկտրոնային, թե տեղում – թե հեռավորության վրա: Գրադարանային նյութերը լրացնում – հարստացնում են դասագրքերը, ուսուցողական – մեթոդական ձեռնարկները:

Ակնառու է, որ գրադարանավարների – ուսուցիչների համատեղ աշխատանքի արդյունքում ուսանողները հասնում են գրագիտության, ընթերցանության, ուսման, խնդիրների լուծման, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու ունակությունների ձեռք բերման ավելի բարձր մակարդակի:

Դպրոցական գրադարանի ծառայությունները պետք է մատուցվեն դպրոցական համայնքի բոլոր անդամներին հավասարապես, անկախ տարիքի, ռասայական պատկանելության, սեռի, լեզվի, կրոնական, ազգային, մասնագիտական – հասարակական կարգավիճակի: Առանձնահատուկ ծառայություններ – նյութեր պետք է տրվեն նրանց, ովքեր ի վիճակի չեն օգտվելու գրադարանի հիմնական ծառայություններից – նյութերից:

Հավաքածուների – այլ ծառայությունների մատչելիությունը պետք է հիմնված լինի Միավորված Ազգերի Մարդու իրավունքների – ազատությունների համընդհանուր հռչակագրի վրա – չպետք է ենթարկվի որ–է կարգի գաղափարական, քաղաքական կամ կրոնական գրաքննության կամ առ–տրական ճնշման:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՎ ՑԱՆՑԵՐ

Դպրոցական գրադարանը էական նշանակություն ունի ցանկացած երկարաժամկետ ռազմավարական գործընթացի համար, ինչպիսիք են գրագիտության, կրթության տարածումը, տեղեկատվության ապահովումը, ինչպես նա– տնտեսական, հասարակական – մշակութային զարգացումը: Որպես մի հաստատություն, որի համար պատասխանատվություն են կրում տեղական, շրջանային – ազգային իշխանությունները, այն պետք է ապահովվի առանձնահատուկ օրենսդրությամբ – քաղաքականությամբ: Դպրոցական գրադարանները պետք է ունենան որակյալ աշխատակազմի, նյութերի, տեխնոլոգիաների – սարքերի ձեռք բերման համար անհրաժեշտ համարժեք – հաստատուն ֆինանսավորում: Դրանք պետք է լինեն անվճար:

Դպրոցական գրադարանը հանդիսանում է տեղական, շրջանային – ազգային գրադարանային – տեղեկատվական ցանցի կար–որ օղակ:

Որքան էլ որ դպրոցական գրադարանը կիսի իր միջոցներն ու ռեսուրսները այլ տիպի գրադարանների հետ, ինչպիսին է, օրինակ, հանրային գրադարանը, պետք է ճանաչել – պահպանել դպրոցական գրադարանի առանձնահատուկ խնդիրները:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցական գրադարանը կրթական գործընթացի անբաժանելի մասն է:

Ընդհանուր – տեղեկատվական գրագիտության, դասավանդման, ուսման – մշակութային զարգացման համար էական նշանակություն ունեն դպրոցական գրադարանի հետ–յալ հիմնական ծառայությունները.

- աջակցել – ամրապնդել կրթական նպատակները՝ համաձայն դպրոցի կողմից նախապես մշակված ուսումնական պլանի
- երեխաների մեջ զարգացնել, կայունացնել ընթերցանության – ուսման, ինչպես նա– գրադարաններից օգտվելու սովորությունները
- հնարավորություններ ապահովել՝ ստեղծելու – օգտագործելու տեղեկատվությունը, գիտելիքի, հասկացողության ձեռք բերման, եր–ակայության զարգացման – դրանից հաճույք ստանալու համար
- աջակցել բոլոր ուսանողներին ձեռք բերել սովորելու – գործնականորեն կիրառելու ունակությունները՝ տեղեկատվության օգտագործման ու գնահատման համար, անկախ ձ–ից, չափից – տարածման միջոցներից, ներառելով հաղորդակցման բոլոր եղանակները
- ապահովել տեղական, շրջանային, ազգային – համընդհանուր պաշարների – հնարավորությունների մատչելիությունը, որը կօգնի ծանոթանալ տարբեր գաղափարների, փորձի – կարծիքների հետ
- կազմակերպել միջոցառումներ, որոնք կնպաստեն մշակութային – հասարակական իրազեկության, դյուրընմբռնողության բարձրացմանը
- աշխատել ուսանողների, ուսուցիչների, ղեկավարության – ծնողների հետ հասնելու դպրոցի առաքելության իրականացմանը
- հռչակել այն գաղափարը, որ մտավոր ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը էական նշանակություն ունեն արդյունավետ – պատասխանատու քաղաքացիական դաստիարակության – ժողովրդավարական հասարակարգում մասնակցություն ունենալու գործում
- բարձրացնել ընթերցանության, ինչպես նա– դպրոցական գրադարանի ծառայությունների – պաշարների դերը ամբողջ դպրոցական համայնքի շրջանակներում

Դպրոցական գրադարանն իրականացնում է այս գործառույթները՝ մշակելով տարբեր քաղաքականություն – զարգացնելով համապատասխան ծառայություններ, ընտրելով – ձեռք բերելով պաշարներ, ապահովելով տեղեկատվության համապատասխան աղբյուրների մտավոր – ֆիզիկական մատչելիությունը, տրամադրելով հրահանգչական միջոցներ – ծառայության վերցնելով որակավորված աշխատողների:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Դպրոցական գրադարանավարը, լինելով աշխատակազմի մասնագիտորեն որակավորված անդամ՝ աջակցություն ունենալով – աշխատելով դպրոցական համայնքի մյուս բոլոր անդամների հետ, ինչպես նա– համագործակցելով հանրային – այլ գրադարանների հետ, պատասխանատու է դպրոցի գրադարանի կառավարման – պլանավորման համար:

Դպրոցական գրադարանավարների դերը փոփոխվում է կապված տվյալ դպրոցի բյուջեի, ուսումնական պլանի – ուսուցման մեթոդաբանության հետ – կարգավորվում է ազգային իրավական – ֆինանսական հրահանգներով:

Որոշակի առումներով, կան գիտելիքի ընդհանուր ասպարեզներ, որոնք կար–որ են դպրոցական գրադարանավարի համար՝ զարգացնելու – ղեկավարելու դպրոցական գրադարանի

արդյունավետ ծառայությունները: Դրանք են՝ պաշարները, գրադարանային գործի, տեղեկատվության կառավարումը – ուսուցումը:

Աճող ցանցային միջավայրում դպրոցական գրադարանավարները պետք է իրազեկ լինեն, որպեսզի կարողանան պլանավորել – ուսուցանել տարբեր տեսակի տեղեկատվական միջոցներից օգտվելու ունակություններ, թե ուսուցիչներին – թե ուսանողներին: Հետ–աբար, նրանք պետք է անընդհատ շարունակեն զարգացնել իրենց մասնագիտական ունակությունները:

ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Արդյունավետ – պատասխանատու գործունեության ապահովման համար անհրաժեշտ է հետ–յալը.

- Դպրոցական գրադարանի ծառայությունների քաղաքականությունը պետք է ձ–ակերպված լինի սահմանելու նրա խնդիրները, առաջնահերթությունները – ծառայությունները՝ կապված դպրոցի ուսումնական պլանի հետ:
- Դպրոցական գրադարանի աշխատանքը պետք է կազմակերպվի – իրականացվի համաձայն մասնագիտական ստանդարտների:
- Ծառայությունները պետք է մատչելի լինեն դպրոցական համայնքի բոլոր անդամների համար – գործեն տեղական համայնքի համատեքստում:
- Համագործակցությունը ուսուցիչների, դպրոցի ղեկավարության, ծնողների, այլ գրադարանավարների, տեղեկատվական մասնագետների – համայնքի տարբեր խմբերի հետ պետք է քաջալերվի:

ՀՌՉԱԿԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Իշխանությունները, որոնք իրենց նախարարությունների միջոցով պատասխանատու են կրթության համար, պետք է զարգացնեն այնպիսի ռազմավարություններ, քաղաքականություններ – պլաններ, որոնք կիրականացնեն սույն հռչակագրի սկզբունքները: Պլանները պետք է իրենց մեջ պարունակեն հռչակագրի տարածման, սկզբնական – շարունակական ուսուցման ծրագրեր բոլոր գրադարանավարների – ուսուցիչների համար:

Թարգմ.՝ Սուսաննա Ղազարյան